



«09» 12 2009թ

ՓՈՐՁԱՔՆԱԿԱՆ ԵԶՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ԲՓ - 127

Տրված է՝

«Գեղիս» ՓԲԸ
ք. Երևան, Այգեծոր 1 հոր, 22շ, բն. 37

Գործունեությունը՝

Ամուլսարի ոսկերեր քվարցիտների հանքավայրի «Տիգրանես»
տեղամասի շահագործման աշխատանքային
նախագծի վերաբերյալ

ՀՀ վայոց Զորի մարզ

Տնօրին



Ա. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 3 էջ:

Արմեն Տօքանչ
Տաճակ

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 127

«09» 12 2009թ.

«Գեորիմ» ՓԲԸ կողմից ներկայացված Ամուսարի ոսկերեր քվարցիտների հանքավայրի «Տիգրանես» տեղամասի շահագործման աշխատանքային նախագծի վերաբերյալ

Պատվիրատու՝ «Գեորիմ» ՓԲԸ

Նախագծող՝ Հ. Կարապետյան

Լիազորված անձ՝ Վ. Համբարձումյան

Ներկայացված նյութեր՝ Աշխատանքային նախագիծ

Տեղադրման վայրը՝ ՀՀ Վայոց Զորի մարզ

Ամուսարի ոսկերեր քվարցիտների հանքավայրը Տիգրանես տեղամասի պաշարները հաստատված են ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի Օգտակար հանածոների պաշարների գործակալության կողմից 2009թ փետրվարի 23-ի թիվ 211 որոշմամբ և կազմում են՝ հանքաքար՝ 189396հազ. տ և մետաղ՝ 16380կգ:

Սույն նախագիծը կազմվել է համաձայն «Գեորիմ» ՓԲԸ տեխնիկական առաջադրանքի և Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից տրված հանքարդյունահանման հատուկ լիցենզիայի հիման վրա մինչև 25 տարի գործունեության ժամկետով, տարեկան միջինը՝ 1500հազ. տ հանքաքար արտադրողականությամբ:

Ամուսարի ոսկերեր երկրորդային քվարցիտների հանքավայրը գտնվում է ՀՀ Վայոց Զորի և Սյունիքի մարզերի սահմանագլխին, Զանգեզուրի լեռնաշղթայի հյուսիսարևմտյան ճյուղավորումների ջրաբաժան մասում, 2500-2988մ բացարձակ բարձրության վրա: Հանքերեակման շրջանը տեղադրված է Սյունիքի մարզի Գորայք բնակավայրից 12կմ դեպի հյուսիս-արևմուտք և 10կմ հարավ Վայոց Զորի մարզի Կեչուտ գյուղից: Մերձակա բնակավայրերն են նաև Սարավան, Սարալանջ և Ուղեձոր գյուղերը:

Հանքավայրի լեռնատեխնիկական պայմանները կանխորոշում են մշակման բաց եղանակը: Հանքավայրի մշակումը կատարվում է 10մ բարձրությամբ աստիճաններով, վերևից ներքև:

Ապարների հանույթաբարձումը իրականացվում է էքսկավատորներով, լեռնային զանգվածի նախնական վիխրեցումով հորատապայթեցման աշխատանքներով:

Հորատման աշխատանքները կատարվում են ԵՏԸ-150 մակնիշի 150 տրամագծով հորատման հաստոցով:

Բարձումը կատարվում է CAT-365C մակնիշի 5.7խմ տարողությամբ շերեփով:

Բացահանքը վերջնական դիրքում ունի հետևյալ պարամետրերը՝

- ամենամեծ երկարությունը՝ 610մ,

- ամենամեծ լայնությունը – 430մ,
- մշակման խորությունը – 103մ
- յուրման տարածքը – 17.5հա
- լեռնային զանգվածի ծավալը 10049.4հազ.խմ,
- մակարացման ապարները – 2794հազ.խմ,
- մակարացման միջին գործակիցը – 0.38:

Հանքավայրի մշակման ժամանակ առաջանում են կորուստներ՝

1. Լոռնատեխնիկական, որոնք բնամասերի տեսքով մնում են հանքաստիճանների կողերին – 2.02%,
2. Շահագործական, որոնք առաջանում են աղբատացման ձևով մշակման ժամանակ – 1.4%:

Բացահանքի ջրամատակարարումը կատարվում է բացահանքի արդյունաբերական հրապարակը խմելու ջրով ապահովելու, ինչպես նաև փոշենստեցման նպատակով հանքախորշերը, ավտոճանապարհները և լցակույտերը տարվա շոգ և չոր եղանակներին ջրելու նպատակով:

Խմելու ջուրը նախատեսված է վերցնել Գնդեվազ գյուղի ջրատարից, որի համար պետք է ստանալ անհրաժեշտ քույլտպությունը (ԶԹԱ):

Տխնիկական ջուրը նախատեսվում է մատակարարել բացահանքի մոտ գտնվող Բենիկ լճակի պոմկակայան-խողովակաշար համալիրով:

Խմելու ջրի ծախսը մեկ մարդու համար ընդունված է 20լ/օր, իսկ տեխնիկական ջրինը՝ 1.0լ/խմ, ավտոճանապարհների և մակերևույթների ջրման համար:

Հանքավայրի ջրաերկրարանական պայմանների համաձայն գետնաջրերը բացակայում են, իետևարար հանքավայրի շահագործման պայմաններում ջրահեռացումը իրականացվում է անմիջապես բացահանքի տարածքը թափվող մքնոլորտային տեղումներից առաջացած ջրհոսքերի հեռացման նպատակով:

Ջրահեռացումը իրականացվում է թեք կուվետների միջոցով կամ ենթարկվում են բնական դրենաժի:

Մակարացման ապարները (2647.4հազ.խմ) պահեստավորվում են արտաքին լցակույտով, որը տեղադրված է բացահանքի հարավ-արևելյան մասում, ոելիեֆի 2890մ բացարձակ նիշում:

Լցակույտի առավելագույն բարձրությունը կազմում է 170մ ընդհանուր մակերեսը 17.8հա, հրապարակի մակերեսը՝ 6.8հա:

Ընդունված է լցակույտառաջացման բուլղողերային եղանակը:

Ծրջակա օդային ավազանի վրա ազդեցության գնահատման համար որոշված են:

- շինարարական տեխնիկայի, փոխադրամիջոցների աշխատանքի ժամանակ
- ծխագագերի արտանետուները,
- գրունտային ճանապարհների կառուցման, մակարացման ապարների հեռացման ժամանակ փոշու արտանետումները:

Արտանետումների աղբյուրները չկազմակերպված են:

Փոշու արտանետումների նվազեցման համար կատարվում է տարածքի ջրցանում, ինչը 40-50%-ով նվազեցնում է փոշու արտանետումները:

Փոշու և գագերի միսիայի տեղությունը պայթեցման ժամանակ կազմում է 10 րոպե, ուստի նրանք համագարկային են և մքնոլորտի աղտոտման մակարդակի հաշվարկման ժամանակ հաշվի չեն առնվում:

Հանքավայրի շահագործման ժամանակ նախատեսվում է բնապահպանական միջոցառումներ.

- ուժեղացնել հսկողությունը բացահանքում տարվող աշխատանքների վրա,
- արգելել տեխնիկայի աշխատանքը գերբեռնվածության ռեժիմում,
- կատարել լեռնազանգվածի և մերձատար ճանապարհներ լրացուցիչ ոռոգում,
- բացահանքի լեռնա-շինարարական աշխատանքների շահագործման ընթացքում պետք է խնայողաբար վերաբերվել շրջակա միջավայրին՝ շաղուուել լրացուցիչ տարածքներ, չկուտակել տարածքում շինարարական և կենցաղային աղբը:

Քացահանքի տարածքը վերակուլտիվացիայի չի ենթարկվում, քանի որ այնտեղ 2830մ-ից ցածր նիշում կան 7100 հազ.տ հաշվարկված արտահաշվեկշռային պաշարներ: Վերակուլտիվացվում է միայն 6.8հա արտաքին լցակույտի մակերեսը:

Փորձաքննական պահանջներ

Անհրաժեշտ է սահմանված կարգով՝

- Նախքան հանքավայրի շահագործման աշխատանքների սկսելը փոխել հողի նպատակային նշանակությունը:
 - Հարստացուցիչ ֆարբիկայի կառուցման համար նախագիծը ներկայացնել բնապահպանական փորձաքննության:

ՀՀ բնապահպանության նախարարություն հաստատման ներկայացնել ջրօգտագործման թույլտվության, սահմանային թույլատրելի արտահոսքի և սպիտակապետական արտահոսքի արտադրության նախագծերը:

Եզրակացություն

«Գեորիմ» ՓԲԸ կողմից ներկայացված Ամուլսարի ոսկերեր քվարցիտների հանքավայրի «Տիգրանես» տեղամասի շահագործման աշխատանքային նախազգի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Փոխառնողեն

Հ. Գրիգորյան

Փորձագետն՝

Հ. Ավետիսյան